# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունվարի 2024 թվականի N 38 - Ա**

**«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1.«Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 903.000 (ինը հարյուր երեք հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:

2. Հաստատել՝

1) «Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) «Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3) «Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.

4) «Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.

5) «Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. հունվարի 26
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ հունվարի 26-ի
N 38 -Ա որոշման

# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ

«Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Ա. Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական
3. Մ. Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ն. Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
5. Ս .Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
6. Ա. Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
7. Թ. Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. հունվարի 26-ի
N 38 - Ա որոշման

# ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«Հայ զինվոր» մշակութային միջոցառման

Միջոցառումը նվիրված է է Հայոց բանակի կազմավորման 32-ամյակին: Միջոցառման հիմնական նպատակն է «Բանակ, ժողովուրդ, պետություն» երեք գերագույն արժեքների միասնության գաղափարն ու խորհուրդը ներկայացնելը:

Տոնական օրվան նվիրված հիշատակի և մեծարման հանդիպումների շարքում կկազմակերպվեն հետևյալ միջոցառումները.

1. Ժամերգություն և մոմավառություն Կապան քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում՝ ի հիշատակ Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին:
2. Այցելություն Կապանի Բաղաբուրջ հուշահամալիր, ծաղկադրում և հարգանքի տուրք Արցախյան պատերազմում զոհված հերոսների շիրիմներին:
3. Այցելություն N զորամաս հանդիպում զինվորների հետ՝ «Մեկ օր զինվորների հետ» խորագրով միջոցառում նախազորակոչային տարիքի դպրոցականների և զինվորների մասնակցությամբ:
5. Ընդմիջում ( սեղանի օրհնության կարգ, հյուրասիրություն):
6. ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասի զինվորների գիտաճանաչողական այցի կազմակերպում «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ և «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ:
7. Սպորտային միջոցառում (վոլեյբոլի խաղ-մրցույթ N զորամասի զինվորների և հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում սովորողներից կազմված հավաքական թիմի միջև):
8. Համերգային տոնական ծրագիր՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 32-ամյակին (ծրագրում՝ ժողովրդական, ազգագրական ու հայրենասիրական երգեր, ազգային պարերի կատարումներ):

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. հունվարի 26-ի
N -Ա որոշման
38

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
## « Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման

**Միջոցառման նպատակը**

Միջոցառման հիմնական նպատակն է «Բանակ, ժողովուրդ, պետություն» երեք գերագույն արժեքների միասնության գաղափարն ու խորհուրդը ներկայացնելը: Միջոցառման նպատակն է ներկայացնել հայ զինվորի անկոտրում կամքի վառ դրսևորման գաղափարը, որը կօգնի երիտասարդներին բարձր պահելու ազգային ու ռազմահայրենասիրական ոգին:

**Միջոցառման պատվիրատուն և կատարողը**

«Հայ զինվոր» խորագրով միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

**Միջոցառման մասնակիցները**

«Հայ զինվոր» խորագրով միջոցառմանը մասնակցում են Սյունիքի մարզում տեղակայված N զորամասի ծառայողներ, հանրակրթական դպրոցի աշակերտներ, արվեստի բնագավառի շնորհալի ստեղծագործողներ, մարզի տարածաշրջաններից հրավիրված երգի և պարի խմբեր, անհատ կատարողներ:

**Միջոցառման ժամկետը և վայրը**

Միջոցառումներն անց են կացվելու 2024թ. հունվար-փետրվար ամիսներին, մարզում տեղակայված N զորամասերում:

**Միջոցառման ընթացքը և ծախսերը**

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի կազմի հետ: .

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. հունվարի 26-ի
N 38 -Ա որոշման

Նախահաշիվ
«Հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման

| | Ծախսերի անվանումը | Հոդված | Գումարը /հազար դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տրանսպորտային միջոցների վարձակալություն | 4216 | **165.0** |
| 2 | Սարքերի և սարքավորումների վարձակալություն | 4216 | **67.0** |
| 3 | Հանրային սննդի ծառայություն | 4236 | **25.0** |
| 4 | Նվերներ | 4237 | **32.4** |
| 5 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | **79.0** |
| 6 | Այլ մասնագիտական ծառայություններ | 4241 | **305.0** |
| 7 | Գրասենյակային ապրանքներ և նյութեր | 4261 | **49.0** |
| 8 | Ընդամենը | | **722.4** |
| 9 | ԱԱՀ | | **180.6** |
| | Ընդամենը | | **903.0** |

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. հունվարի 26 -ի
N 38 - Ա որոշման

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Հայ զինվոր» մշակութային միջոցառման միջոցառման

| h/h | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Կատարման վայրը |
|---|---|---|---|
| 1 | Մշակութային միջոցառում նվիրված Հայոց բանակի կազմավորման 32-ամյակին | Հունվար-փետրվար 2024թ | ՀՀ Սյունիքի մարզ |
| | 1.1 Զինվորական տողան /մարզպետի ուղերձ բանակի տոնի կապակցությամբ/ | 28 հունվար ժ.$9^{00}$- $10^{00}$ | ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամաս |
| | 1.2 Ժամերգություն և մոմավառություն՝ ի հիշատակ Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին | 28 հունվար ժ.$10^{30}$- $11^{00}$ | ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի |
| | 1.3 Երթ՝ Բաղաբուրջ հուշահամալիր, ծաղկադրում և հարգանքի տուրք Արցախյան պատերազմում զոհված հերոսների շիրիմներին /հոգեհանգստի կարգ / | 28 հունվար ժ.$11^{00}$- $12^{00}$ | ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Բաղաբուրջ թաղամաս |
| | 1.4 ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասի զինվորների այցի կազմակերպում «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ | 28 հունվար ժ.$12^{00}$- $13^{30}$ | «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ |
| | 1.5 Ընդմիջում, ճաշ /սեղանի օրհնության ծես/ | 28 հունվար ժ.$14^{00}$- $15^{00}$ | ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամաս |
| | 1.6 Զինվորների այցելություն «Կապանի երկրագիտական թանգարան »ՊՈԱԿ | 28 հունվար ժ.$15^{30}$- $17^{30}$ | «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ |
| 2. | «Հանդիպում զորամասերում» մշակութային ծրագիր /տոնական համերգներ/ նվիրված Հայոց բանակի կազմավորման 32-ամյակին | հունվար, փետրվար | ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասեր |
| 3. | Սպորտային միջոցառում /վոլեյբոլի խաղ-մրցույթ N զորամասի զինվորների և հանրակրթական դպրոցներում սովորող բարձր դասարանցիներից կազմված հավաքական թիմի միջև | փետրվար | ՀՀ Սյունիքի մարզ<br>ք. Կապան |
| 4. | «Մեկ օր զինվորների հետ» նախազորակոչային տարիքի դպրոցականների և զինվորների հանդիպման ցերեկույթ | հունվար, փետրվար | ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամաս |

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի